'ի դրունս գանձի և պաշարաց, և եթէ 'ի դրունս բանտարկելոց և որում տեղի որ իցէ մի՛ տրքնեսցի յաւելի քանթէ 2 ժամ ժամանակ, զի ամենայն պահակ միջոց 2 ժամ ժամանակի փոխեսցի հանելով հինն մուծանելով նորն, զի տրքնութիւնն զինուորին մերոյ 'ի միջոց 24 ժամ ժամանակի մի՛ լինիցի յաւելի քանթէ 8 ժամ, այսինքն չորս անգամ, ֆի մին անգամն 2 ժամ ժամանակաւ մնացորդ ժամանակն թէպէտ առ'ի հանգիստ, այլ պատրաստ 'ի ժամագիր տեղի զօրագլխի իւրոյ։

ԳԼՈՒԽ ՇԺԸ.

Ամենայն մայրաքաղաք հարկաւոր է ունիլ չորս ծայրագոյն իշխանս, մի 'ի նոցանէ քաղաքապետութեան ընդ երիս խորհրդակցօք վասն կառավարելոյ քաղաքին և ընդ իւր գաւառաց գեղօրէից ստանօղ ամենայն եկամտից և հատուցանող ամենայն ծախից, եթէ զինուորական և եթէ սպասաւորական, եթէ շինութեան և եթէ պատրաստութեան պաշարաց և այլն, և մինն 'ի նոցանէ բերդապան, և մի 'ի նոցանէ զօրագլուխ կառավարիչ զօրաց, որում բնակեալ 'ի նոյն քաղաքի, և մի 'ի նոցանէ մայր դատաւոր, զի ընդ խորհրդակցօք իւրօք դատիցէ ամենայն բնութիւն մարդոյ որում բնակի 'ի վիճակի նոյնոյ քաղաքի և վճռեսցէ վարձ իւրաքանչիւր գործոց ձեռաց,